«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ `Սովորողների արժեհամակարգի ձևավորումը Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը ուսուցանելիս

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Ռիմա Մեսրոպյան

ՄԱՐԶ `Կոտայքի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝Ավետիք Իսահակյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց

1. Նպատակներն ու խնդիրները

1. Ծանոթանալ ստեղծագործության ժանրին, նշել առանձնահատկությունները

2. Զարգացնել բարձրաձայն ճիշտ կարդալու կարողություններ և հմտություններ։

3. Ձևավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողություն

4. Նպաստել հասկացածը սեփական խոսքերով վերարտադրելուն

5. Ձևավորել հիմնական դիրքորոշում տեքստի գլխավոր հերոսների բնավորության, արտաքին նկարագրի վերաբերյալ

6. Ձևավորել արժեհամակարգը ճիշտ հասկանալու, գնահատելու կարողություններ

7. Ապահովել ազատ և անկաշկանդ արտահայտվելու, դատողություններ անելու, միմյանց հետ հաղորդակցվելու բարոյահոգեբանական մթնոլորտ։

8. Զարգացնել բառային աշխատանք կատարելու կարողությունները

9. Զարգացնել միմյանց հարցեր ուղղելու կարողություններն ու հմտությունները

10. Նպաստել դիմացինին ուշադիր լսելու, նրա կարիքը հարգելու անձնային որակների ձեռքբերմանը

11. Պարզել լրացուցիչ տեղեկատվություններից օգտվելու կարողությունները։

2. Ներածություն

Ժամանակակից դպրոցի առջև դրված են մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար ուսուցիչն ունի իր ուրույն դերը։ Այդ խնդիրներից մեկը սովորողների արժեհամակարգի ձևավորումն է դասաժամերի ընթացքում։ Թեման արդիական է ու պահանջված բոլոր ժամանակների համար։

Սա լայն հասկացություն է, որի մեջ ներառված են մի շարք բարոյական հատկանիշներ։

Արժեհամակարգի ձևավորումը ենթադրում է դժվարին, համբերատար աշխատանք։

Աշակերտը մեկ օրում կամ ամսում ազնիվ (կամ մեկ այլ հատկանիշ) չի դառնում, և ոչ էլ ուսուցիչը կարող է մեկ դասաժամում հրաշքներ գործել։ Բայց տևական աշխատանքի շնորհիվ, քայլ առ քայլ առաջ գնալով՝ վերջապես մի օր հասնում ենք բաղձալի արդյունքի։ Այս ուսումնասիրության ընթացքում փորձեցինք ներկայացնել, թե արժեհամակարգի որ բաղադրիչները կապ ունեն թեմայի հետ, որն էլ կարելի է ձևավորել Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքն անցնելիս։

Կարևորեցինք Դեմիրճյան մարդու տեսակը, որովհետև երբեմն աշակերտները նշանավոր մարդկանց օրինակով ինքնադաստիարակման կարողություններ են ձեռք բերում։ Իսկ Դեմիրճյանը այն անհատն է, որից կարելի է միշտ սովորել և՛ հայրենասիրություն, և՛ հայասիրություն, և՛ ճաշակ, և՛ ազնվություն, և՛ մայրենի լեզվի իմացություն. . .

Նա գրականագետ է, որի ստեղծագործություններն ունեն դաստիարակչական հիմքեր, հրապարակախոս է, որին հետաքրքրում է հայի տեսակի պահպանությունը արձակագիր է և դրամատուրգ, որի ստեղծագործությունների փիլիսոփայությունը, ցավոք, շատերը չէին հասկանում։ Նա առաջինն էր, որ 1953 թվականին անդրադարձավ Նախիջևանի և Ղարաբաղի հարցին։ Խաղաղ, հանգիստ հայրենասեր էր։

«Ավելորդը» պատմվածքն ուսումնասիրելիս աշակերտները կիմանան պատմվածքը գրելու շարժառիթների, պատմվածքում նկարագրված դեպքերի մասին։ Կսովորեն ճիշտ կարդալ, հիմնական ասելիքն առանձնացնել, ճանաչել հերոսներին, ձևավորել դիրքորոշում նրանց բնավորության, արտաքինի վերաբերյալ։

Ուսուցչի կողմից ընտրված ճիշտ մեթոդների շնորհիվ (քառաբաժան, T-աձև,M-աձև աղյուսակ և այլն) աշակերտները կհասկանան կերպարի դրական կամ բացասական, լավ ու վատ, ճիշտ և սխալ կողմերը և գիտակցաբար ընկալելով՝ իրենց մեջ էլ կձևավորեն որոշակի հատկանիշներ։

Աշխատանք անելիս եկեք հիշենք՝ «Աշակերտը անոթ չէ, որ լցնես, այլ ջահ է, որ հարկավոր է լուսավորել կայծերով (չինական առած)»։

Հետաքրքիր մեթոդներ ընտրելու շնորհիվ կարելի է շարժել աշակերտների հետաքրքրասիրությունը։ Թեման վերլուծելիս աշակերտները ձեռք կբերեն նաև այն վերլուծելու, իմացածը կյանքում կիրառելու կարողությունների և հմտություններ։

Աշակերտը ձեռք կբերի խմբում աշխատելու, արագ սովորելու, ուրիշներին սովորեցնելու ունակություն, կզարգացնի ստեղծագործական հմտություն, հարգանք ընտանիքի, ավանդույթների և մարդու նկատմամբ։

3. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը ուսուցանելիս

Սովորողների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս էլ կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ: Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել կամ վճարում: Ու դա կարող է տարբեր լինել՝ տանջանք, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը չի տրվում հեշտությամբ: Այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է ամեն ինչ: Ու թվում է՝ կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, ու մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, որտեղ հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել սովորողի համար: Նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Ու այս ամենի պտուղները կլինեն իրական արժեքները և ոչ թե թելադրված, անգիր արած, բայց սովորողի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Ու եթե դպրոցում կարողանանք ձևավորել արժեքներ աճող սերնդի համար, ուրեմն կունենանք աշխարհի ամենալավ կրթական համակարգը:

Արժեհամակարգի ձևավորման հարցում անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, իսկ ավելի շատ՝ լեզուն և գրականությունը (առանց տարբաժանելու մայրենի և օտար լեզուների): Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական

միջոցառումներ և այլն) ավելի արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը։

Ի՞նչ արժեքների կրող պետք է լինի ապագայի քաղաքացին և ի՞նչ է անում մեր պետությունը դրանց ձևավորման համար։

Մեր երկրում արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով։

Սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշված են նաև արժեքները, որոնք պետք է տա դպրոցը։ Ըստ ուսումնական բնագավառների և կրթության աստիճանների՝ առանձին նշվում են արժեքները, որոնց հանրագումարն էլ կձևավորի մեր պատկերացրած ապագա քաղաքացուն։ Սովորողը պետք է գիտակցի ընտանեկան ազգային պատկանելությունը, ճանաչի և արժևորի ազգային մշակույթը, հայրենիքը, ստեղծի ընկերական հարաբերություն, կարևորի բարոյական չափանիշները, գնահատի գեղեցիկը, բարին, հարգի ծնողներին, մեծերին ու փոքրերին, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ, լսի, ապրումակցի, հասկանա, աջակցի, ցուցաբերի հանդուրժողականություն, մարդասիրություն և այլն։

Իսկ այժմ փորձեմ ներկայացնել, թե ինչպես եմ սովորողի մեջ ձևավորում արժեհամակարգ, երբ ուսուցանում են Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը։

Հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրով նախատեսված է 7-րդ դասարանում անցնել Դերենիկ Դեմիրճյանի կենսագրությունը և «Ավելորդը» պատմվածքը, որոնց համար հատկացված է վեց դասաժամ։ Առաջին դասաժամին կայանում է ծանոթությունը սովորողի և Դեմիրճյան մարդուն գրողի հետ, ինչը կարևորում եմ, քանզի գրողի անձնական կյանքն ու մարդկային հատկանիշներն էլ են նպաստում անհատի ձևավորմանը և կայացմանը։ Ընդհանրապես յուրաքանչյուր դաս ստեղծագործություն է, և ուսուցիչը՝ ստեղծագործող։ Յուրաքանչյուր դասը՝ առավել ևս։ Ուրեմն, գրականության ուսուցիչն ուսուցանող ու դաստիարակող է, նա որոնում ու գտնում է իր արվեստը սովորողներին մատուցելու նորանոր ձևեր ու մեթոդներ։

Սկսում եմ դասը հարցադրումով.

1. Ի՞նչ գիտեք Դերենիկ Դեմիրճյան գրողի մասին

2. Ի՞նչ խոսքերով են նրան բնութագրել հայ գրականության մեծերը

3. Եղե՞լ եք արդյոք նրա տուն-թանգարանում։

Ոչ բավարար պատասխաններ լսելուց հետո ներկայացնում եմ հայ մեծերի խոսքը՝ ուղղված գրողին.

«Ինչի մասին էլ գրի, կգրի ներքին այրումով»։

Ա. Բակունց

«Նա հոգեբանական անալիզի վարպետ է, ունի դիտող սուր աչք, թափանցող միտք, օժտված է հումորով, նրա լեզուն յուրահատուկ է»։

Ավ. Իսահակյան

Հետո համառոտ ներկայացնում եմ կենսագրությունը, կարդում հատվածներ «Ինքնակենսագրականից» և Գայանե (Գարուն) Ավետիսյանի հուշերից։

Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ Դ. Դեմիրճողլյանը ծնվել է 1877 թ. փետրվարի 17-ին Ախալքալաքում։ Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում։ Սիրել է արվեստը, որը նրա մեջ բորբոքվել է քահանա հորեղբոր տանը, ուր հաճախակի կազմակերպվում էին գրական-երաժշտական-թատերական հանդեսներ։

Երկու տարի հետո նրանց ընտանիքը տեղափոխվում է Արդահան, որտեղ շարունակում է կրթությունը։ 1892 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ էլ ծանոթացել է բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի հետ։

1898 թվականին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա աշխատել Արդահանում՝ որպես օդերևութաբանական կայանի դիտորդ, փոստակայանի վերակացու։

1900 թվականին հաստատվել է Թիֆլիսում, գրական կապեր է հաստատել Հովհ. Թումանյանի հետ և 1899 թվականին դարձել «Վերնատուն» գրական խմբակցության

հիմնադիր անդամներից մեկը։ Երաժշտություն ուսումնասիրելու նպատակով 1903 թվականին մեկնել է Մոսկվա։ 1905-1910 թվականներին սովորել է Ժնևի համալսարանի մանկավարժական ֆակուլտետում, իսկ երաժշտանոցում ջութակի դասեր է առել։ Վերադառնալուց հետո Թիֆլիսում զբաղվել է ուսուցչությամբ Գայանյան օրիորդաց դպրոցում։

1925 թվականին տեղափոխվել է Երևան և աշխատել որպես Հայ մշակույթի ինստիտուտի գիտական քարտուղար։ 1927-1931 թվականներին Հայ աշխատավորական գրողների միության նախագահ։

Առաջին դասաժամին կենսագրական նյութը հաղորդելիս ներկայացնում եմ նաև Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը։

Նշում եմ, որ նա գրական ասպարեզ է իջել իբրև բանաստեղծ. ունի բանաստեղծությունների երկու ժողովածու։ Գրել է նաև պոեմներ, քառյակներ։

1919 թվականից անցել է արձակին և դրամատուրգիային։ Գրել է պատմվածքներ («Ավելորդը», «Ստամոքսը», «Տերտերը»), դրամատիկական գործեր («Վասակ», «Հովնան Մեծատուն», «Քաջ Նազար»)։

1943-1946 թվականներին գրել է իր կյանքի գլխավոր գիրքը՝ գլուխգործոցը՝ «Վարդանանք» պատմավեպը։

1953 թվականին ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։

Մահացել է 1956 թվականին։

Որպես տնային աշխատանք՝ հանձնարարում եմ կազմել կենսագրական աղյուսակ (ձևը, գույնը ընտրում է աշակերտը), հավաքել տեղեկություններ, գրել ասույթներ և հուշեր հեղինակի մասին։

Հաջորդ դասաժամին ուսումնասիրում ենք «Ավելորդը» պատմվածքի դիպաշարը։ Այստեղ նախ փորձում ենք վերհիշել, թե ինչ է պատմվածը, որովհետև սովորողները վեցերորդ դասարանում անցել են դա։ Ու համատեղ ջանքերով լրացնում ենք առաջադրված աղյուսակը։

Պատմվածքը որպես գրական ժանր

Ձևը	Հերոսները	Բովանդակությունը
Արձակ ստեղծագործություն է։ Ծավալուն չէ։ Դեպքերի, իրադարձությունների նկարագրությունը սեղմ է, հակիրճ։	Պատմվածքում ունենում ենք մեկ կամ մի քանի հերոս։	Նկարագրվում է մեկ հիմնական իրադարձություն կամ դրվագ, որի միջոցով բացվում է կերպարի էությունը։

Ապա թվարկում ենք հեղինակների անուններ, ովքեր գրել են պատմվածքներ՝ Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ստ. Զորյան, Ա. Բակունց, Դ. Դեմիրճյան և այլք։

Հայտարարում եմ, որ այս դասաժամին կարդալու ենք Դ. Դեմիրճյանի՝ 1917 թվականին գրած պատմվածքներից մեկը՝ «Ավելորդը», և առաջարկում եմ տալ «ավելորդ» բառի բառարանային բացատրությունը.

1. Պետք եղածից ավելի, ավելացած, ավել մնացած

2. Անպետք, անօգուտ, պետք չեկող

3. Զուտ, անտեղի

Տեղեկացնում եմ, որ պատմվածքը գրվել է պատերազմի ժամանակ, թե որ պատերազմի, թողնում եմ, որ կռահեն իրենք (կան հուշումներ)։

Առաջին համաշխարհային պատերազմ-ավելորդ կապի մեջ առաջադրում եմ հարցեր.

ա. Ի՞նչը կարող է լինել ավելորդ ընդհանրապես և պատերազմի ժամանակ։

բ. Ե՞րբ կարող են իրերը դառնալ ավելորդ

գ. Մարդը կարո՞ղ է լինել ավելորդ։ Ինչու՞։

Հուզմունքով եմ լսում սովորողների՝ մեկը մյուսից գնահատելի պատասխանները, մանավանդ երրորդ հարցի վերաբերյալ։ Մեկը մյուսին ընդհատելով, զայրացած՝ աշակերտները խոսում են այն մասին, որ մարդը ոչ մի հանգամանքում ավելորդ լինել չի կարող։

Ուրեմն, աշակերտը գնահատում է մարդուն, արժևորում է նրա դերը հասարակության մեջ, ունի սեփական կարծիք և այլն արտահայտելու հմտություն, իսկ մենք չենք սահմանափակում նրա միտքը։

Հետո ներկայացնում եմ, որ պատմվածքում պատմվել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակներին վերաբերող կյանքի մի դրվագ։ Ռուսական բանակը թուրքերի հետ բախվել էր հայկական սահմանների վրա։ 1914 թվականի դեկտեմբերի 14-ին թուրքերն առաջ էին շարժվում Սարիղամիշի ուղղությամբ։ Ռուսները նրանց առաջխաղացումը կասեցնում են, իսկ դեկտեմբերի 22-ին հասցնում ջախջախիչ հարված։

Այստեղ անհնար է չխոսել պատերազմների մասին ընդհանրապես։

Պատերազմը չարիք է, ու մեզանից ոչ ոք չի ցանկանում պատերազմ և մարդկային զոհեր։

Աշխարհում ամենաշատը մենք ենք դեմ պատերազմներին, որովհետև շատ ենք կորցրել և գիտենք կորցնելու ցավը։ Ինչ արած, պատերազմն է սիրահարվել մեզ։ Պատերազմը ստիպում է արցունքով նայել շրջապատին, ստիպում է թևաթափ լինել։

Պատերազմը արյունով է ներկում հողը, հերոսների արյունով։

Հայը, որ գուցե ամենից շատ է մահ, քաղաքների ու գյուղերի կործանում տեսել, թալանվել ու կոտորվել, բայց միշտ էլ ծնունդով է մաքառել գոյատևման համար, ծնունդով հաղթել մահին։

Նշում եմ, որ «Ավելորդը» պատմվածքի շրջանակներում մենք հնարավորություն ունենք տեսնելու այն, ինչ կատարվել է անցյալում։

-Իսկ ի՞նչ կասեք ներկայիս մասին, ի՞նչ է կատարվում մեր օրերում։

Ցավալի է լսել պատասխանը աշակերտների, ովքեր քառօրյա տեսան, քառասունչորսօրյա տեսան։Դրա մասին նրանք չլսեցին, այլ ապրեցին, զգացին։

Մեկն ասում է, որ այսօր էլ աշխարհի տարբեր մասերում շարունակվում են պատերազմները, մարդիկ այսօր էլ ստիպված լքում են իրենց տները։ Եվ հենց մեր օրերում և մեր երկրում մեր ժողովրդի մի հատվածը ստիպված եղավ թողնել իր բնակավայրը, իր տունը՝ ռումբերի աղմուկի ներքո։

Խոսում են նաև կորցրած հայրենիքի, հողերի, զոհված տղաների մասին, այն հերոս տղաների, ովքեր հայրենիքը կորցնելու վախից անվախ էին դարձել և կռվում էին՝ առանց ոչնչի մասին մտածելու։ Մեկը խոսում է քառօրյայում զոհված հրազդանցի Վահե Զաքարյանի մասին։ Հարցիս՝ արդյոք ճանաչել է նրան անձամբ, շփվել է, գիտեր՝ ինչ նախասիրություններ ուներ, պատասխանում է՝ ոչ, բայց այժմ լավ է ճանաչում, գիտի, որ տանկիստ էր, զբաղվում էր սպորտով՝ արևելյան մարտարվեստով, մրցույթների հաղթող է եղել, ունի շատ մեդալներ, հայրենասեր է ու իր կյանքը տվել է հանուն հայրենիքի։ Ասում է, որ ինքն էլ նրա նման զինվոր կդառնա և կպաշտպանի իր հայրենիքի սահմանները։ Հարցիս՝ ճիշտ է մտածում, արդյոք նրանց ընկերը, լսում եմ միայն դրական պատասխան ու տեսնում մեծ ոգևորվածություն։ Մի քիչ կոտրված թեմայի ծանրությունից, մի քիչ ինքս էլ ոգևորված ու գնահատված՝ հասկանում եմ, որ աշակերտները սիրում են, արժևորում են հայրենիքը, և նրանց մեջ ձևավորված է արժեհամակարգի սյուներից մեկը՝ հայրենասիրությունը։ Ուրեմն, սովորողը գիտակցում է, որ հայրենիքի պաշտպանության գործում կարևոր է սեփական դերը, օժանդակությունը, հասկանում է, որ իրենցից յուրաքանչյուրը հայրենիք պիտի համարի ոչ թե այն տարածքը, որտեղ ինքը ապրում է կամ ցանկանում է ապրել, այլ իրենց երազած, միշտ իրենց երազած, միշտ իրենց սրտում կրած այն մի ափաչափ տարածքը, որը եզակի է ու թանկ, որը իրենց տունն է, իրենց սրտի զարկը, երազանքների թագավորությունը։

Աշակերտներից մեկն էլ պատմում է, որ բարեկամներից մեկը փախել է իրենց գյուղից՝ չհասցնելով ոչինչ վերցնել։ Խոսքը 44-օրյա պատերազմի մասին է։ Շարունակելով աշակերտի խոսքը՝ ներկայացնում եմ, որ այսպիսի քառսային իրավիճակում մենք ստիպված ենք լինում վերարժևորել ունեցածը, նայել այն բոլոր առարկաներին, որ շրջապատում են մեզ, թանկ են մեզ համար, կարևոր են, որևէ հիշողության հետ են կապված, և մենք այդ դեպքում ստիծված ենք լինում ընտրել այդ առարկաներից մեկը կամ մյուսը։ Հարկադրված ենք լինում վերագնահատել արժեքները, առարկաները,

մարդկանց, և այն դեպքում, երբ հարցը վերաբերում է կյանքին, փրկությանը, շատ առարկաներ դառնում են ավելորդ։

Ահա նմանատիպ թեմա է արծարծվում «Ավելորդը» պատմվածքում։

Այնուհետև սկսվում է պատմվածք դասարանական ընթերցումը։ Սա ուղղորդված ընթերցանություն է, որի ընթացքում աշակերտները ձեռք են բերում ընթերցողական գործուն հմտություններ։ Աշակերտները ընթերցում են հատված առ հատված՝ իրար հաջորդելով, դադարներով, կռահումներով (գուշակումներով), ապացույցներով։ Կարդում ենք դասարանում (ինչքան հասցնում ենք), ապա հանձնարարում շարունակել տանը։ Ի դեպ, ընթերցանության ժամանակ աշակերտների ուշադրությունը հրավիրում եմ տեքստում գործածված օտար բառերին (զայֆա, կամենդանթ, սիզըն օճախա դյուշմիշըմ, бросьте ее, к черту և այլն)։

Խոսում ենք տարբեր ժողովուրդների լեզվի, մշակույթի, պատմության հանդեպ հարգալից վերաբերմունքի մասին, նշում, որ յուրաքանչյուր ազգ նույնքան շատ է սիրում իր հարազատ, իր մայրենի լեզուն, ինչքան հայ ժողովուրդը իր ոսկեղենիկ լեզուն, ինչը մեր ազգապահպանության երաշխիքն է, ինչը փորձում ենք մաքուր ու անաղարտ պահել։ Հիշեցնում ենք, որ ուրիշի լեզուն սովորելը մեծ ձեռքբերում է և դա նշանակում է, որ հարգենք ուրիշի լեզուն, բայց մերը «ղայիմ» պահենք։ Յուրաքանչյուր հայ պիտի կարողանա իր լեզվով ճիշտ արտահայտի իր մտքերը, ճիշտ խոսի հայերեն։ Չեմ մոռանում մեկ անգամ հիշեցնել, որ սոցցանցերում անգամ գրառումները կատարեն հայերեն, անգամ հայի ստորագրությունը պիտի լինի հայերեն։

Մի խոսքով, «Մայրենի լեզվի բառերը զգանք, ապրենք, իսկ օտար լեզվինը՝ հասկանանք, սովորենք ու հիշենք»։

Ուշադրություն եմ հրավիրում նաև բարբառային բառերին, ինչը իր հերթին յուրովի է կերպավորում հերոսներին։

Պատմվածքում օգտագործված բարբառը Կարինի բարբառի Ախալքալաքի խոսվածքն է։ Մի խոսքով, այստեղ էլ աշակերտը գիտակցում է, որ լեզուն՝ իր բարբառներով, ինչ դեր ու նշանակություն ունի։

Եվ քանի որ աշակերտները տանը պիտի կարդան պատմվածքն ամբողջությամբ, փորձում եմ այն մի քիչ հետաքրքիր ու գրավիչ դարձնել և հանձնարարում եմ լրացնել աղյուսակը: Պարզ է, որ երեխան պիտի կարդա, պրպտի, հստակ տեսնի: ,

Բառային աշխատանք

Բառ	Բացատրություն կամ հոմանիշ	Պատմվածքից նախադասություն, որտեղ կիրառվածված է բառը
Կուզ	Սապատ, ուռուցիկ մաս մեջքին, պարանոցի շրջանում, թիկունքի վրա	Միշտ հաստ շալը վաթսուն-յոթանասուն տարեկան կուզի վրայով վզին էր փաթաթում Հաճի աղան
Օդա		
Քարվանսարա		
թաղիք		

Եվ այսպես 10-15 բառ:

Հաջորդ դասաժամին պիտի անցնենք կերպարները: Կերպարի ուսուցումը հեշտ թվացող, սակայն բավականին դժվար խնդիր է: Ճիշտ է, աշակերտը իր ձեռքի տակ ունի դասագիրքը, ինչը երբեմն նրան կաղապարում է: Դրանից խուսանավելու համար կարելի է դիմել կերպարների պատկերասրահներ կազմելու, ստեղծելու հանձնարարականին: Օրինակ՝ պատմվածքից դուրս գրել այն հատվածները, որոնք օգտագործված են կերպարի արտաքինը կամ ներքինը բնութագրելիս:

Այս աշխատանքը, կարծում եմ, թույլ է տալիս աշակերտին ավելի երկար ժամանակ շփվել տվյալ երկի հետ, օգնում է հարստացնել բառապաշարը, հմտանալ դիմանկար կերտելու մեջ:

Կամ՝

Ի՞նչ էին մտածում փախից առաջ և ի՞նչ էին անում:

Հաճի աղա	Սրբուն	Հաճի մար և մյուսներ

Հաջորդ երկու դասաժամերին ուսումնասիրում ենք կերպարները: Քանի որ համարյա բոլորն էլ գրառումներ են կատարել, ուստի կարելի է շատերին հարցնել և հատված առ հատված ներկայացնել Հաճի աղային: Նախ տալիս են «Հաճի» բառի բառարանային բացատրությունը՝

1. Երուսաղեմ ուխտի գնացած քրիստոնյա
2. Մահտեսի

Աշակերտները ներկայացնում են, որ նա իր կնոջ հետ երեսուն տարեկանում գնացել էր Երուսաղեմ՝ ուխտի: Հարցս՝

-Ի՞նչ եք կարծում, եթե նա հավատով գնում է ուխտագնացության, պե՞տք է ենթադրել, թե նա հետևում է քրիստոնեական արժեքներին, հետևում է մարդասիրական արժեքներին և առաջնորդվում է արդյոք «Դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեն» պատվիրանով: Աշակերտներից մեկը պատասխանում էր՝ ո՛չ, որովհետև Հաճի աղան անգամ եկեղեցի չէր գնում: Նա անտարբեր էր շրջապատի մարդկանց նկատմամբ: Հիշենք, թե ինչպես է պատասխանում հարևանուհու հարցին, այն կնոջ, ով աշխատում էր իր տանը. «մի կտոր, մի փշրանք ստանալու հույսով» Հաճի աղայի չոր ու դաժան պատասխանից սթափվում է կինը և դուրս գալիս հուսահատ:

Հետո սկսում են բնութագրել Հաճի աղային:

I աշակերտ- «Երբեք հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տանից խանութ գնալիս: Այն Հաճի աղան, որի փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՛ն: Միշտ հաստ շալը 60-70 տարեկան կուզի վրայով վզին փաթաթած, երկար իրանը բերընքսիվար ընկնելու պես առաջ թեքած, ուղտի վիզը առջև երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր քիթը օդի մեջ խրած ընթանում էր նա»:

Բնութագրում է արտաքինը՝ նշելով, որ հենց պատմվածքի սկզբից էլ այս մարդը վստահություն, հավատ չի ներշնչում, բայց այն, որ հպարտ է, ուշադիր, դա իրենց էլ է պետք:

II աշակերտ- «Տասը տարեկանից տուն է շինել Հաճի աղան, վանքի պես տուն, և այդ տունը այսօր քանդվում է»։

«Տղա՛ քս ձեռքն կերթան. . . տունս. . . գերդաստանս»։

Թվում է, թե աղան մտահոգ է ընտանիքի անդամների համար, ինչը աշակերտի մեջ ձևավորում է ընտանիքը սիրելու, նրանով մտահոգվելու և իրեն նրա մի մասնիկը համեմատելու հատկանիշը։ Բայց. . . «Փախչել, շուտով դուրս գալ մահի ճիրաններից։ Մնացածը՝ կին, երեխա, ընկեր, բարեկամ նսեմացավ նրա աչքում»։ Սկզբում թված, թե Հաճին ամեն ինչ անում է ընտանիքի, զավակների համար, բայց հատվածից երևաց, որ նա մտածում է միայն իր ու ունեցվածքի մասին, ինչը ճիշտ չէ և ոչ մի պարագայում։

III աշակերտ- Հաճի աղան գործնական, հաշվենկատ և հպարտ է։ Նա չնայած առաջացած տարիքում է, բայց գերդաստանի ղեկը նրա ձեռքին է։ Փախից առաջ էլ նա մտածում է ունեցվածքի, հարստության մասին։

Վտանգը, սեփականությունը կորցնելու վախը ստանում են նրա մեջ մարդուն՝ թողնելով միայն չոր հաշիվներ։ Ամեն ինչ կորցնելու վախից անզգայացած՝ Հաճին մտնում է քրոջ՝ Սրբունի սենյակը՝ անգամ չնկատելով նրան, նայում է սենյակի իրերին ու մտովի դրանք տեղավորում ֆուրգոնում։ Իսկ քրոջը. . . նրան ավելորդ է համարում և ավելորդների շարքին դասում։
IV աշակերտ- Խոսում է ընտանիքի մասին ընդհանրապես, լսվում են տարբեր կարծիքներ, շրջապատից օրինակներ են բերում (ծնողը ծերանոցում է, միայնակ է ապրում և այլն), քննադատում են ոմանց, ովքեր վտանգի պահին կարող են մոռանալ ընտանիքը։

Տագնապալի օրերն անցնում են։ Աղայի ընտանիքը փրկվում է։ Հաճի աղան դրանից հետո ծանր հոգեբանական ապրումներ է ունենում, խորապես զղջում է իր հաշվենկատ արարքի համար։ Թվում է, թե նա փորձում էր փրկել ամենակարևորները, թողնել ավելորդը, բայց այդ ավելորդի շարքում է դասում նրան. . . քրոջը։ «Հիմա էր հաշիվ տալիս իրեն, որ այդ սարսափներն է կրել քույրը՝ այն արհամարված էակը, որի մեռնելը ինքը այնքա՛ն հեշտ էր համարել»։

Ու այսպես շարունակ մեղադրում են, փորձում են արդարացնել, հատվածներ են մեջբերում, մի խոսքով, երևում է, որ նրանք հասկանում ու գնահատում են չարը և բարին, լավը և վատը: Իսկ սա նշանակում է, որ մենք լավ մարդ ենք դաստիարակում, ու դա մեր գերագույն նպատակն է:

Ինչպես Հովհ. Թումանյանը կասեր. «Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել <u>մարդ</u> կոչումի հետ»:

Ամփոփելով կերպարը՝ նշում ենք, որ Դ. Դեմիրճյանը պատմվածքում ցույց է տալիս պատերազմի ավերիչ ուժը մարդու վրա, մյուս կողմից էլ շեշտում է, որ շահի, նյութականի պաշտամունքը քանդում է ազգակցական սուրբ կապերը, սպանում է խիղճը, մարդը զրկվում է հոգևոր գեղեցկությունից: Գրողը ցույց է տվել խղճի ու եսասիրության, նյութականի ու գթասրտության հավերժական հակադրությունը, որ ուղեկցում է մարդուն իր ծննդից:

Պատմվածքի հերոսներից է նաև Սրբունը: Նա Հաճի աղայի հարազատ քույրն է, ով անդամալույծ էր և ականջներն էլ ծանր էին: Հաճին նրան իր տուն էր բերել ամուսնու մահից հետո: Սրբունը աշխատասեր էր, ինքնասեր և ընտանիքին օգնելու համար կարն ու կարկատանը իր վրա էր վերցրել: Սրբունը շատ ավելի բարձր անձնավորություն է, քան եղբայրը: Նա հոգատար է, անձնվեր: Նա մտածում է հեռացող հարազատների մասին, ձեռնոց է տալիս եղբորը և ցավ ապրում, որ չի հասցրել մնացածի համար էլ գործել: Հանձնարարում եմ T-աձև աղյուսակով ներկայացնել նրանց:

Համեմատենք

Հաճի աղա	Սրբուն
Եսասեր	Ինքնասեր
Հնարագետ	Զուստ
Դաժան	Անձնվեր
Ճարպիկ	Աշխատասեր
Անգութ	Հոգատար
Փորձառու	Ուժեղ
	Խաղաղ

Հաշվենկատ Ունևոր	

Վերլուծելով կերպարը, հասկանալով կերպարի դրական կողմերը՝ աշակերտները կցանկանան այդպիսի արժեքների կրող դառնալ՝ աշխատասեր, հոգատար. . .

Իհարկե, ծայրահեղ իրավիճակներում կարող է հայտնվել մեզանից յուրաքանչյուրը, բայց չմոռանանք որոշումներ կայացնելիս առաջնորդվել բարձր արժեքներով և մարդասիրությամբ: Որպես ավարտ՝ դասի վերջում մեկ անգամ ևս հիշեցնում եմ: Որպես անդրադարձ՝ հանձնարարում եմ լրացնել աղյուսակը:

Ես՝

Ի՞նչ հասկացա պատմվածքը կարդալուց հետո:	3 բան, որ կարևորեցի	Գրել նոր ավարտ

4. Եզրակացություն

Կրթական համակարարգում արժեհամակարգը ձևավորում է բոլոր դասաժամերին։ Դանդաղ ու համբերատար գործընթաց է սա, որը, սակայն, միշտ էլ տալիս է իր պտուղները։

Մեր կողմից ուսուցանվող «Արժեհամակարգի ձևավորումը Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը ուսուցանելիս» թեմայի վերլուծությունը ցույց տվեց, որ մեզ հաջողվել է հասնել մեր նպատակին։

Վերլուծությունից պարզվեց, որ սովորողները կարողանում են վերարտադրել գրողի կենսագրություն, կարևոր դրվագներ պատմել նրա կյանքից, հիշել ու գնահատել մեծերի խոսքը՝ ուղղված հեղինակին։ Ճանաչում են հեղինակի մարդ տեսակը, բարոյական հատկանիշներն ու արժեքները՝ հայրենապաշտություն, հայասիրություն, անկեղծություն, արդարություն և այլն։

Աշխատանքի արդյունքներից եզրակացրինք, որ սովորողները ճանաչում են պատվածքներ գրող հեղինակներին, այդ թվում նաև Դ. Դեմիրճյանին, համոզվեցինք, որ նրանք ճանաչում են հեղինակի ստեղծագործությունները և տարբերակում են առավել հայտնիները։

Աշակերտները ճանաչում են պատմվածքը, հասկանում նրա ժանրային առանձնահատկությունները։

Կատարված աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ սովորողները հասկացել են պատմվածքում ընգրկված ժամանակը, պատերազմի բերած ավերածությունները, թալանն ու կոտորածը, ժողովրդի պարտադրված հեռանալու պատճառները և իրենց կարծիքն են հայտնել այդ մասին։

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ աշակերտները կարողանում են ճիշտ կարդալ, կարողանում են ճիշտ օգտվել բառարաններից, հեշտությամբ կատարում են բառային աշխատանքներ, գտնում են պատկերավորման միջոցները, կարողանում են միմյանց հարցեր առաջադրել, գուշակություններ անել, ասածը հիմնավորել տեքստի հատվածներով։

Պարզ դարձավ, որ աշակերտներն ըմբռնում են իրենց խոսքերով, հասկանում տեքստի հիմնական ասելիքը։

Ստեղծագործությունը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո և վերլուծելուց հետո մեզ հաջողվեց պարզել, որ աշակերտները հասկացել են պատմվածքի գաղափարական բովանդակությունը, ճանաչել են գլխավոր և երկրորդական կերպարները, բնութագրել են նրանց, հայտնել սեփական կարծիք կերպարի վերաբերյալ։ Կարողացել են տալ կերպարների համեմատական բնութագիրը։

Ու սովորողի կողմից լավը, բարին, դրականը գնահատելու արդյունքում նրա մեջ ձևավորվում է արժեհամակարգ, ինչի բաղադրիչները մենք տեսնում ենք պատմվածքում՝ հայրենիք, հայրենասիրություն, ընտանիք, աշխատասիրություն, հարգանք մեծերի ու փոքրերի, ծնողների նկատմամբ, ավանդույթ և այլն։

Լինենք համբերատար, և ամեն ինչ լավ է լինելու։

5. Օգտագործված գրականություն

Գրականություն 7, Գասպարյան Դավիթ, 2016 թ.

Գրականության տեսություն, Ջրբաշյան Էդ. , 1980 թ.

Արդի հայերենի բացատրական բառարան, 1969 թ.

ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչներ

Դ. Դեմիրճյան, Վահագն Մկրտչյան

Դ. Դեմիրճյան, Աղաբաբյան Սուրեն, 1977 թ.

Հուշեր գրողի մասին, Ավետիսյան Գայանե

6. Բովանդակություն

1.Տիտղոսաթերթ---------- 1

2. Նպատակներն ու խնդիրները---------- 2

3. Ներածություն---------- 3

4. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը ուսուցանելիս---------- 5

5. Եզրակացություն---------- 18

6. Օգտագործված գրականություն---------- 20

7. Բովանդակություն----------21